# Philatelic Profile: Nshan Basmadjian

**Born** – Yerevan, Armenia in 1934, in the vicinity of Zoravor Church
**First introduction to collecting** – at the age of 10
**Member** – Union of Philatelists of Armenia and Armenian Philatelic Association (ArPA)
**Collecting interests** – topical (medicine, Nobel Prize winners), chronological (USSR & Armenia), stamps, envelopes, maximum cards
**Exhibitions** – Numerous international and national (USSR and ArmSSR) exhibitions, all ArPA exhibitions in recent years
**Awards** – silver bronze and silver for "All in the Name of Man" collection, diplomas



# Ֆիլատելիստական Դիմանկար՝ Նշան Բասմաջյան

**Ծնվել է** 1934 թվականին, Երեւանում, Զորավոր եկեղեցու շրջակայքում:

Տաս տարեկանից **հետաքրքրվել է** ֆիլատելիայով: **Անդամագրված է** Հայաստանի Ֆիլատելիստների Միությանը (Երեւան) եւ Հայ Դրոշմագիտական Միությանը (Գլենդել. ԱՄՆ):

**Հետաքրքրության շրջանակները**՝ թեմատիկ (Բժշկություն, Բժշկության բնագավառի Նոբելյան մրցանակի դափնեկիրներ), ժամանակագրական (ԽՍՀՄ, Հայաստան՝ նամականիշ, ծրար, բացիկ):

**Ցուցահանդեսներ**՝ միջազգային, նախկին ԽՍՀՄ, Հայաստանի եւ Հայ Դրոշմագիտական Միության:

**Մրցանակներ**՝ Արծաթապատ եւ բրոնզե մեդալներ, դիպլոմներ:

***Igor Grigorian: When and how did you start stamp collecting?***

**Nshan Basmadjian:** It was right after the WWII, in 1946, when I started collecting for real. I was 12 years old, and our family lived in Germany. I became a frequent visitor to a philatelic store nearby, buying whatever stamp I wanted.

***IG: What made you collect stamps?***

**NB:** Our neighbor, an Armenian from Istanbul, introduced me to stamp collecting. He showed me several stamps; I was fascinated by their beauty, so it became my life-long attraction. I started collecting fauna, flora, paintings, sports, scientists. Only after I entered the Medical Institute did I decide to start collecting stamps related to medicine. I started with world stamps paying tribute to 100th Anniversary of the Red Cross, people of medicine who won Nobel Prizes. 1962 was announced as a year devoted to fighting malaria, so I am proud to say that I have every single stamp issued in that regards. Also, France and Finland issue stamps related to the Red Cross annually; I also collect those.

***IG: Did you collect these stamps worldwide, or were you attracted to specific countries only?***

**Իգոր Գրիգորյան** - Ե՞րբ եւ ինչպե՞ս սկսեցիր նամականիշ հավաքել:

**Նշան Բասմաջյան** – 1946 թվականին, Երկրորդ համաշխարհային պատերազմից անմիջապես հետո, մեր ընտանիքը ապրում էր Գերմանիայում: Ես՝ տասներկու տարեկան պատանիս դարձա մոտակա ֆիլատելիստական խանութի մշտական այցելուներից մեկը, ուր ես գնում էի իմ նախընտրած դրոշմաթղթերը:

**Ի.Գ.** – Ի՞նչը քեզ դրդեց նամականիշ հավաքելուն:

**Ն.Բ.** – Մեր հարեւանը՝ մի պոլսահայ, ծանոթացրեց նամականիշեր հավաքելու սկզբունքներին: Նա ինձ ցույց տվեց մի քանի նամականիշ: Ես հմայված էի նրանց գեղեցկությամբ, այնպես որ ֆիլատելիան դարձավ իմ կյանքի ուղեկիցը: Ես սկսեցի հավաքել բուսական, կենդանական աշխարհին, գեղանկարչությանը, մարզական կյանքին, գիտնականներին նվիրված նամականիշներ:

Հետո, երբ ես ընդունվեցի Բժշկական ինստիտուտ, որոշեցի հավաքել միայն բժշկությանը վերաբերող դրոշմաթղթեր: Սկսեցի Կարմիր Խաչի 100 ամյակին նվիրված տարբեր երկրների նամականիշներից, ապա անցա բժշկության բնագավառի Նոբելյան մրցանակի դափնեկիրներին: Ֆրանսիան եւ Ֆինլանդիան, մինչեւ այժմ ամեն տարի հրատարակում են Կարմիր Խաչին նվիրված նամականիշներ, որոնք նույնպես ես հավաքում եմ:

1962 թվականը Առողջության Համաշխարհային Կազմակերպության կողմից հայտարարվեց մալարիայի դեմ պայքարի տարի եւ ես հպարտությամբ կարող եմ ասել, որ ունեմ այդ

**NB:** I collected worldwide, as I could not limit myself in my theme. The only countries that I collect nationally are Armenia, my motherland, and the Soviet Union, including early Russia.

***IG: Have you ever removed stamps from envelopes?***

**NB:** Of course I did, and not only in the beginning. Lately I found a bunch of envelopes from Russia, Romania, Belorus, Ukraine, even the USA, so I soaked the stamps, and then accurately dried them to put them into my stock books.

***IG: Where you ever limited financially to buy stamps and philatelic materials?***

**NB:** No, not really. When I was young, my father helped me out. I even used to exchange cigarettes (part of my father's military ratio) for stamps. The peek of my stamp acquisition fell on the times when I graduated from the institute and started earning money myself. It is hard to admit now, but almost half of my salary would go towards stamp acquisition.

***IG: Could you describe in more details your national collections?***

**NB:** Of course. I have chronological collection of the entire issues of the Soviet Union in both mint and used stamps, including those of Russia's first issues of 1860s.

***IG: When you started collecting stamps seriously, were you interested in learning more about people and events on the stamps?***

**NB:** Of course, I not only studied their lives and their discoveries, but also what people would benefit from them. Nobel Prize winners were of utmost interest for me, as their discoveries in biochemistry, medicine, etc. greatly affected the health condition of the mankind.

***IG: Do you continue acquisition of stamps now?***

**NB:** To be absolutely honest, no. I stopped acquiring stamps in 2000. First of all, for the first time in my life I experienced financial difficulty, and second, I do not have anyone to leave my collection to. My sons are busy with their work, so are my grandsons, and they are not interested in stamp collecting. I have enough, at last. When I sit down to review my collection, I get depressed – how much money could one have spent on stamps. My wife used to tell me that she wanted to get all my stamps, bring them to a meeting of stamp collectors, throw them in the air and watch how people will collect them from the floor, she used to re-

թեմային նվիրված բոլոր նամականիշները:

**Ի.Գ.** – Դու ամբողջ աշխարհի, թե՞ որոշակի երկրների թողարկումներն ես հավաքում:

**Ն.Բ.** – Իմ թեմաներով ես հավաքում եմ ամբողջ աշխարհի նամականիշները, քանի որ չեմ ուզում որեւէ կերպ սահմանափակվել: Որոշակի երկրների նամականիշներ, որ ես հավաքում եմ, դա իմ հայրենի Հայաստանն է եւ նախկին ԽՍՀՄ-ի բոլոր նամականիշները, նաեւ Ցարական Ռուսաստանի նամականիշները: Ես չեմ ուզում սահմանափակվել թեմատիկայի մեջ, ուստի հավաքում եմ բոլոր երկրների թողարկումները:

**Ի.Գ.** – Երբեւէ ծրարից նամականիշ առանձնացրե՞լ ես:

**Ն.Բ.** – Իհարկե, եւ ոչ միայն սկսնակ ժամանակ: Վերջերս իմ արխիվում մի տրցակ ծրար գտա Ռուսաստանից, Ռումինիայից, Ուկրաինայից, Բելոռուսիայից, ԱՄՆ-ից: Թրջեցի, նամականիշները զգուշորեն պոկեցի, չորացրի ու տեղավորեցի ալբոմների մեջ:

**Ի.Գ.** – Երբեւիցէ դրամական դժվարություններ ունեցե՞լ ես նամականիշներ եւ այլ ֆիլատելիստական նյութեր ձեռք բերելու համար:

**Ն.Բ.** – Բնավ ոչ: Երբ երեխա էի, հայրս էր օգնում: Նույնիսկ հորս սիգարետները փոխանակում էի դչոշմաթղթերի հետ: Իսկ ինստիտուտն ավարտելուց հետո, որը համընկավ իմ ֆիլատելիստական բուռն շրջանին, արդեն լրիվ ինքնուրույն հոգում էի իմ ծախսերը նյութեր հայթայթելիս: Պիտի խոստովանեմ, որ աշխատավարձիս գրեթէ կեսը տրամադրել եմ ֆիլատելիային:

**Ի.Գ.** – Կարո՞ղ ես հանգամանալից նկարագրել քո ազգային հավաքածոները:

**Ն.Բ.** – Անշուշտ: Ես ունեմ ԽՍՀՄ բոլոր թողարկումները՝ ըստ ժամանակագրության, ինչպես նաեւ Ռուսաստանի 1860 թվականից առաջին թողարկումները՝ լրջորեն:

**Ի.Գ.** – Երբ սկսեցիր հավաքել, նամականիշների պատկերված անձինք եւ իրադարձությունները քեզ հուշո՞ւմ էին ընդարձակել քո հետաքրքրությունները նրանց մասին:

**Ն.Բ.** – Ես ոչ միայն հետաքրքրվում էի նրանց կենսագրությամբ ու հայտնագործություններով, այլեւ պատմության մեջ նրանց մատուցած ծառայությունների նշանակությամբ: Ինձ ավելի շատ հետաքրքրում էին Նոբելյան մրցանակի դափնեկիրները, քանի որ կենսաքիմիայի ու բժշկության բնագավառում նրանց ուսումնասիրությունները կարեւոր դեր էին խաղում մարդկության կյանքում:

**Ի.Գ.** – Արդյոք դեռ շարունակո՞ւմ եք հավաքել:

**Ն.Բ.** – Եթե անկեղծ լինեմ, ոչ: Սկսած 2000 թվականից այլեւս չեմ գնում: Նախ Ձեր ասած դրամական դժվարությունները հասան ինձ: Ապա. ո՞ւմ եմ թողնելու… Որդիներս ու թոռներս շատ զբաղված են իրենց աշխատանքով, նաեւ հետաքրքրություն չունեն հավաքորդչության հանդեպ: Նաեւ՝ այլեւս պետք չունեմ…

Երբ վերջերս թերթում եմ հավաքածոս, ակամա զարմանում եմ ինքս ինձ վրա. որքա՜ն կարելի է ծախսել դրոշմաթղթի վրա… Լուսահոգի կինս ասում էր, թե հավաքածոդ տանելու եմ ձեր ակումբ եւ ցրելու եմ, որ տեսնեմ, թե ինչպես են հավաքելու օդից ու գետնից:

proach me that I spent all my salary on stamps.

***IG: You could still sell the collection…***

**NB:** Well, I have not encountered a serious buyer yet. Everybody talks, but when it is time to give me an offer, they disappear.

***IG: During your philatelic years, have you encouraged anyone to start collecting stamps?***

**NB:** Of course I did. I even used to host a TV show for young philatelists. I would also give stamps away to encourage young people to begin this journey.

***IG: Have you ever been elected to a philatelic governing body?***

**NB:** Yes, I was elected president of the Yerevan philatelic club, was a board member of the Union of Philatelists of Armenia.

***IG: Have you participated in any stamp exhibitions?***

**NB:** Many times. Since 1976 I participated in all Trans-Caucasian, joint Yerevan-Titograd, USSR-Hungary, USSR-Czechoslovakia, USSR-India, USSR-Bulgaria, Armenia-Argentina, National Armenia'93 exhibitions. I was awarded silver plated and silver medals at various exhibitions.

***IG: Besides being a hobby and means to spend one's free time, what is so important about collecting stamps? Does it benefit society?***

**NB:** Stamp collecting unite people of different nationalities, of different professions. All international exhibitions boost peace and friendship between nations. It boosts interest in studying anthropology, culture, art, geography.

***IG: Could you share a personal experience with our readers?***

**NB:** My father also used to collect stamps. We used to have an album at home, where he would hinge the stamps. He had an accumulation of Europe up to 1940. A person, well known in philatelic circles in Armenia requested to look through the stamps at his pace at his home, and took the album. Few days later I heard that he was at the philatelic society headquarters requesting a permission to take his collection with him abroad. I immediately went to his home only to find out that the doors of his apartment were sealed, and that he has left the country already. Later I found out that he moved to New Jersey, but did not want to see that person again.

***Interview conducted by Igor Grigorian***

**Ի.Գ.** – Բայց կարող ես վաճառել, չէ՞:

**Ն.Բ.** – Լուրջ գնող դեռ չեմ հանդիպել: Բոլորը խոսում են, բայց երբ հերթը հասնում է առաջարկին, ոչ ոք չկա…

**Ի.Գ.** – Քո ֆիլատելիստական կյանքի ընթացքում որեւէ մեկին ներգրավել ես հավաքածո կազմելուն:

**Ն.Բ.** – Իհարկե: Ժամանակին նույնիսկ հեռուստատեսային հաղորդաշար ունեի երիտասարդության համար: Շատերին դրոշմանիշներ էի բաժանում, որ կարողանամ նրանց առաջնորդել այս հետաքրքիր աշխարհը:

**Ի.Գ.** – Երբեւէ ընտրվե՞լ ես ֆիլատելիստական կազմակերպությունների ղեկավար օղակներում:

**Ն.Բ.** – Ես ժամանակին ընտրվել եմ Հայաստանի Ֆիլատելիստների Միության Երեւանի քաղաքային բաժանմունքի նախագահ: Հայաստանի Ֆիլատելիստների Միության վարչության անդամ:

**Ի.Գ.** – Ցուցահանդեսների մասնակցե՞լ ես:

**Ն.Բ.** – Բազմաթիվ: Սկսած 1976 թվականից մասնակցել եմ Անդրկովկասյան բոլոր ցուցահանդեսներին, Երեւան – Տիտոգրադ, ԽՍՀՄ – Հունգարիա, ԽՍՀՄ – Չեխոսլովակիա, ԽՍՀՄ – Հնդկաստան, ԽՍՀՄ - Բուլղարիա, Հայաստան - Արգենտինա երկազգային, ինչպես նաեւ "Հայաստան – 93" ցուցահանդեսներին: Ստացել եմ արծաթե եւ արծաթապատ մեդալներ.

**Ի.Գ.** – Հոբբիից եւ ժամանցից բացի ի՞նչ նշանակություն ունի ֆիլատելիան, հանրությանը ինչո՞վ է դա օգտակար:

**Ն.Բ.** – Ֆիլատելիան կապում է տարբեր տարիքի, մասնագիտությունների, նույնիսկ ազգությունների մարդկանց: Բոլոր միջազգային ցուցահանդեսները նպաստում են ժողովուրդների միջեւ խաղաղության եւ բարեկամության ամրապնդմանը: Այդ փոքրիկ զարդարուն թղթերը օգնում են մարդաբանությունը, պատմությունը, աշխարհագրությունը, արվեստն ու գրականությունը ուսումնասիրելուն:

**Ի.Գ.** – Կարո՞ղ ես անձնական որեւէ դեպք պատմել:

**Ն.Բ.** – Հայրս էլ էր հավաքող: Մենք տանը մի ալբոմ ունեինք, որի մեջ նա նամականիշներ էր փակցնում: Այդ ալբոմի նամականիշները մինչեւ 1940 թվականի Եւրոպական երկրների թողարկումներ էին: Հայաստանի ֆիլատելիստների շրջանակում հայտնի մի մարդ ինձ խնդրեց այդ ալբոմը տուն տանել ուսումնասիրելու համար: Մի քանի օր հետո ես տեղեկացա, որ նա եկել էր Հայաստանի ֆիլատելիստների միություն եւ ղեկավարությանը խնդրել իր հավաքածոն արտասահման տանելու միջնորդություն: Ես փորձեցի նրան գտնել եւ ալբոմս հետ վերցնել, բայց նրա բնակարանն արդեն կնքված էր…

Նա մեկնել էր արտասահման…

*Հարցազրույցը վարեց Իգոր Գրիգորյանը*